

ՌԻՆԷՐ ԻՐԱՒՈՒՆՔ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Բէզմուրեանների քաղաքային ընակարանը, Ընդարձակ հիւրասենեակ: Աջ պատի մէջ դէպի փողոցի պատշգամբը դռներ, որոնց աջ ու ձախ կողմերում լուսամուտներ: Խորքի պատի մէջ երկու դռներ, մէկը ընդլորովին ձախ, զրեթէ անկիւնում դէպի նախասենեակ, միւսը բեմի միջին ուղղութեամբ դէպի սեղանատուն: Երկու դռներ եւս ձախ պատի մէջ, որոնցից խորքինը դէպի Անտոնի առանձնասենեակը, իսկ ավանսցենայի կողմինը — Հերսէլիի ըուգուարը, որից դէնն է ննջարանն ու երեխաների սենեակը: Աջ պատի անկիւնում դաշնամուր (ռոյնալ), իսկ ավանսցենայի կողմում գեղեցիկ փոքրիկ գրասեղան սեւ փայտից, վրէն արծաթեայ թանաքաման եւ զանազան պարագաներ նաեւ մի քանի զրքեր գեղեցիկ կազմերով եւ մի փոքրիկ սիրուն ժամացոյց: Զախ պատի առջեւ, պատից թաւական հեռու զահաւորակ, թազկաթոռներ, սեղան նրբագործ սփողոցով, վրէն այլքով: Առհասարակ սենեակը կահաւորուած է ծաշակով: Նրա գլխաւոր զարդերն են նկարներ, գրաւիւրներ, արծանիկներ եւ այլ գեղարուեստական իրեր, որոնց սիրահար է Հերսէլին: Խորքի պատի վրայ, դէպի նախասենեակի դռ-

ները հայելի նորագոյն ոճով, իսկ աջ կողմում՝ վառարան, որի առջեւը շիրմա:

Սեպտեմբերի կէսն է, եղանակը տակաւին տաք է: Բոլոր լուսամուտներն ու դռները քաց են, քացի առանձնասենեակի դռներից: Սեղանատանը երեւում են ճաշի սեղանը սփռոցով ծածկուած եւ պատի ժամացոյցը: Այնտեղ երեքմն-երեքմն երեւում են Սամսոնն ու Վիրժինէն եւ չքանում:

ՏԵՍԻԼ I

ՀԵՐՍԵԼԻ ԵՒ ՆԱՏԱԼԻԱ:

Վարագոյրը քարճրանալիս Հերսէլին յափշտակուած դաշնամուր է նուագում: Շուագաձը մի երկար ու տխուր կտոր է:

Նախասենեակից լսում է զանգակի ձայն: Սամսոնը դուրս է գալիս սեղանատնից, անցնում նախասենեակ: Փոքր անցած այնտեղից ներս է մտնում Նատալիան գլխարկով:

ՆԱՏԱԼԻԱ: (Մօտենում է մի քանի քայլ Հերսէլուն, կանգ առնում, կարծելով, որ նա յետ կը նայի: Հերսէլին յափշտակուած, չի նկատում: Վերջապէս, Նատալիան մօտենում է ու համբուրում նրան):

ՀԵՐՍԵԼԻ: (Յնցուելով, ուժգին զարկում է կլաւիշներին եւ խիստ դիսսօնանսով նուագումը ընդհատում): Հաղիւ գտել էի տօնը: (Եետ է նայում): Ահ, այդ դժու ես, մամա: (Հառնչելով): Ի՞նչ նորութիւն կայ:

ՆԱՏԱԼԻԱ: Էհ, իմ նորութիւնն էլ դու ես, հնութիւնն էլ: Տօնն է:

ՀԵՐՍԵԼԻ: Այո, կաբինեթում զբաղուած է իւր հաշիւներով:

ՆԱՏԱԼԻԱ: (Գլխարկի ժապաւենները քանալով):

Ուրախ է, թէ էլի առաջուայ պէս աչքունքը կիտա՞ծ։
 ՀԵՐՍԵԼԻ. Չըգիտեմ, գնա ինքդ տես, հարցրու։
 (Հառաչելով, անցնում է հայելու կողմ՝ եւ մազերն ուղղում)։

ՆԱՏԱԼԻԱ. (Գլխարկը դնում է սեղանի վրայ եւ, կամացուկ մօտենալով Հերսելուն, առնում է ծնոը)։
 Հերսելի, ասելու ես ինձ, վերջապէս, ինչ է պատահել ձեր մէջ, թէ՛ չէ։

ՀԵՐՍԵԼԻ. (Ծնոը խլելով)։ Թող ինձ, մամա, մի հարցրու, ոչ մի բանի մասին մի հարցրու, ի սէր Աստծու։

ՆԱՏԱԼԻԱ. Հեշտ է ասել «ոչ մի բանի մասին մի հարցրու»։ Մի ամսից աւելի է այս տանը ուրախ դէմք չեմ տեսնում։ Նա տխուր է ու լուռ, դու օրից օր մաշուում ես ու նիհարում։ «Մի հարցրու», կարծես, ես ոչ աչք ունեմ, ոչ սիրտ, կարծես, ես մայր չեմ, այն էլ մի հատիկ աղջկայ մայր։

ՀԵՐՍԵԼԻ. (Դառն հեզնութեամբ)։ Այո, ի հարկէ, մայր ես, և շատ սիրող մայր։

ՆԱՏԱԼԻԱ. Այդ քնչպէս ես խօսում հետս. դու ծաղրում ես։ Չը լինի՞ թէ պատճառն ես եմ։

ՀԵՐՍԵԼԻ. Մամա, բաւական է, դու էլ մի տանջիր ինձ։

ՆԱՏԱԼԻԱ. Ե՛ս եմ քեզ տանջում, թէ՛ դու ինձ։ Հերսելի, ես չեմ հանդարտուիլ, մինչև որ չիմանամ ինչ է պատահել այս տանը։ Ես հէնց դրա համար եմ եկել և ոտս այստեղից դուրս չեմ դնիլ մինչև որ բոլորը չը պատմես, լսում ես, բոլորը։

ՀԵՐՍԵԼԻ. (Մի քանի վայրկեանի ինքն իւր հետ լուռ կռուելուց յետոյ, մօտենում է մօրը)։ Մամա, առաջ քան ամեն բան իմանալն, ասա ինձ եթէ մի օր թողնեմ այս տունը և հեռանամ, կընդունես ինձ քեզ մօտ։

ՆԱՏԱԼԻԱ. (Ցնցում է): Թողնես այս տունն ու հեռանաս... Ինչո՞ւ...

ՀԵՐՍԵԼԻ. (Դառն հեզնութեամբ): Ինչո՞ւ... Հէնց այնպէս, քէֆիս համար, չէ որ մօդա է, քմահաճութիւն... (Դառն ծիծաղ):

ՆԱՏԱԼԻԱ. (Ապշած): Դու կամ խելագարուել ես կամ ինձ ծաղրում ես: Համ լուրջ ես խօսում համ էլ ծիծաղում ես ինքդ քո ասածի վրայ: Ձեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում:

ՀԵՐՍԵԼԻ. Ախ, իմ դրութիւնը հասկանալը դժուար է, մտմա, այլ պէտք է զգալ: Զգալ այն, ինչ-որ ես եմ զգում, և յետոյ դատապարտել այն կանանց, որոնք իբր թէ առանց լուրջ պատճառի թողնում են ամուսիններին և հեռանում:

ՆԱՏԱԼԻԱ. Քանի գնում այնքան աւելի միտքով թնում է, ամեն բան խառնւում: Հերսէլի, մի տանջիր ինձ, ասա ցաւդ:

ՀԵՐՍԵԼԻ. Կասեմ, մամա, դանակն արդէն ոսկորին է հասել: Բայց առ այժմ թող ինձ, հեռացիր: Նա շուտով դուրս կըգայ, իսկ ես չեմ ուզում, որ դու հանդիպես նրան: Անցիր երեխաների սենեակը: Նրանք մեռակ են: Ահա, կարծեմ, գալիս է, գնա՛, մամա...

ՆԱՏԱԼԻԱ. (Վերցնում է սեղանի վրայից գլխարկը): Տէր Աստուած, Դու մեզ փրկես փորձանքից: (Անցնում է ըուդուար):

Առանձնասենեակից ներս է մտնում Անտօնը տըխուր ու զրգոտած: Հազնուած է այնպէս, ինչպէս առաջին գործողութնում:

ՏԵՍԻԼ II

ՀԵՐՍԵԼԻ ԵՒ ԱՆՏՕՆ.

ԱՆՏՕՆ. (Երկար եղանակով): Ես գնում եմ նոստ-

քի մօտ, իսկոյն կը վերադառնամ: Եթէ Մարմարեանը
գալ, խնդրի, որ ինձ սպասի այստեղ:

ՀԵՐՍԵԼԻ: (Չը նայելով նրա կողմ): Լաւ:

ԱՆՏՈՆ: Այնուհետեւ բարի եղէք առաւօտները չը
նուագել: Դուք ինձ խանգարում էք:

ՀԵՐՍԵԼԻ: Լաւ:

ԱՆՏՈՆ: (Հագիւ գրգիռը զսպելով): Դայեակը տը-
նից հեռացել է, ո՞վ կայ երեխաների մօտ:

ՀԵՐՍԵԼԻ: Մայրս:

ԱՆՏՈՆ: Մօր պարտականութիւնները կատարում
է տատը: Երեւի, այդ էլ այն ազատամիտ կնոջ գաղա-
փարներէն է, որ ընդունել էք:

ՀԵՐՍԵԼԻ: Ուրիշ ինչ էք հրամայում:

ԱՆՏՈՆ: Հրամայում եմ, որ այդ կնոջ ոտն իմ տա-
նը չը լինի: Բաւական է, որքան կրթեց ձեզ:

ՀԵՐՍԵԼԻ: Ես չեմ կարող իմ տան դռները փա-
կել իմ ընկերուհու առջև:

ԱՆՏՈՆ: «Իմ տան դռները»: Դուք տուն չունիք,
տիկին, ոչ: Այն առաջ էր, երբ ես, փափաղելով տիրա-
նալ ձեր սիրոյն, տուել էի ձեզ ամեն բան: Այժմ տունն
իմն է, իսկ դուք... դուք նրամէջ... կառավարիչ, տըն-
տեսուհի: Եւ դեռ այդ պաշտօնն էլ ձեզ համար, ինչ
պէս տեսնում եմ, շատ է:

ՀԵՐՍԵԼԻ: Խնցէք, եթէ շատ էք համարում:

ԱՆՏՈՆ: Եւ ձեզ համար ոչինչ, ոչինչ...

ՀԵՐՍԵԼԻ: (Տատանում է, յետոյ դրականապէս)
Ոչինչ...

ԱՆՏՈՆ: Աստուած իմ, սա կին չէ, այլ հրէշ...

ՀԵՐՍԵԼԻ: Ինչո՞ւ: Որովհետեւ չեմ ստում և չեմ կա-
րող ստել: Որովհետեւ արտայայտում եմ այն, ինչ-որ զգո՞ւմ
եմ: Որովհետեւ մի կտոր հացի համար չեմ պղծում ան-
կեղծութիւնն ու ճշմարտութիւնը:

ԱՆՏՈՆ: Անկեղծութիւնն ու ճշմարտութիւնը չա-

ըիք են, երբ խորտակում են մի ամբողջ ընտանիքի կեանքը...

ՀԵՐՄԵՆԼԻ: Այո, կեղծիքի, ստի և խաբէութեան վրայ հիմնուած կեանքը: Մի կեանք, որի հիմունքը անբարոյական է, ուրեմն և խախուտ:

ԱՆՏՕՆ: Կեցցէք, բաւական լառաջադիմել էք: Անբարոյական էք համարում մի հիմունք, որ սրբագործուած է աստուածային և մարդկային օրէնքներով: Մի հիմունք, որ միակ պատուանդանն է մարդկութեան խելացի և բարոյական գոյութեան: Ապա ո՞րն է ձեր երեւակայած կեանքի հիմունքը:

ՀԵՐՄԵՆԼԻ: Սիրտը:

ԱՆՏՕՆ: Սիրտը, հա հա հա, սիրտը...

ՀԵՐՄԵՆԼԻ: Այո, այն, որ ոչ մի բռնութեան չի հպատակում:

ԱՆՏՕՆ: Կը ցանկայի իմանալ ի՞նչ է թելադրում ձեզ, վերջապէս, ձեր սիրտը:

ՀԵՐՄԵՆԼԻ: Նա ինձ թելադրում է, որ այս դուրս թիւնը շարունակել ալլ ևս անհնարին է և պէտք է վերջապէս, մի ելք գտնել ձեզ և ինձ ազատելու համար:

ԱՆՏՕՆ: Եթէ միայն իրաւունք տան ձեզ սեպհական կամքով խնդիրը վճռելու: Սէրը ձեզ վրայ չազդեց, յոյս ունիմ կազդի վերջիվերջոյ ոյժը...

ՀԵՐՄԵՆԼԻ: Որի օգնութեանն արդէն սկսել էք դիմել:

ԱՆՏՕՆ: Ոչ, դեռ չեմ սկսել: Այդ դեռ ծաղիկներն են, պտուղը յետոյ կը ճաշակէք:

ՀԵՐՄԵՆԼԻ: Արէք ինչ-որ ուզում էք, այսուհետեւ ինձ համար բոլորը միեւնոյնն է: (Ուզում է հեռանալ ըուղուար):

ԱՆՏՕՆ: Սպասեցէք:

ՀԵՐՄԵՆԼԻ: Ի՞նչ էք կամենում:

ԱՆՏՕՆ. (Զսպելով իրան): Մօտեցէ՛ք ինձ: (Նայում նրան սուր հայեացքով):

ՀԵՐՍԵԼԻ. (Նայելով նրան): Ի՞նչ էք հրամայում: (Սարսափում է նրա հայեացքից) Ա՛հ... (Ծրեսը ծեռներով ծածկում է):

ԱՆՏՕՆ. Սարսափում էք: Ա՛յդ էիք կամենում: Սէրը առելի էր, ծանր, անտանելի... Ա՛հ... (Գրգռում է, զսպում: Գրգիռը տեղի է տալիս կրքին: Նայում է նրան մի քանի վայրկեան կրքոտ աչքերով, ապա կիրքը տեղի է տալիս ինքնասիրութեան): Ա՛հ, անէծք չար սատանային... Ես վախենում եմ ինձանից: (Գնում է արագ քայլերով նախասենեակի դռներով):

ՀԵՐՍԵԼԻ. (Հանդարտ, քայց ուժասպառ ընկղմւում է զահաւորակի վրայ):

Բուռուարից ներս է մտնում Նատալիան:

ՏԵՍԻՆ III.

ՀԵՐՍԵԼԻ ԵՒ ՆԱՏԱԼԻԱ.

ՆԱՏԱԼԻԱ. Այժմ ես գիտեմ ինչ է անցնում ձեր մէջ: Ես բոլորը լսեցի: Հերսէլի, դու նրան չես սիրում:

ՀԵՐՍԵԼԻ. Եւ դու դեռ հարցնում ես: Վեց տարի շարունակ կռուել եմ ինքս ինձ հետ, վեց տարի ստիպել եմ ինձ սիրել, չեմ կարողացել: Զօրի բան է: Եւ ինչպէս Աստուած խելքս առաւ, ինչպէս համաձայնութեան կեանքս կապել նրա հետ: Մամա, մամա, ինչո՞ւ ինձ չըպահեցիր քո տանը գոնէ երկու տարի էլ, մինչև որ միտքս կըբացուէր: Միթէ այնտեղ չը կար ինձ համար մի կտոր հաց:

ՆԱՏԱԼԻԱ. Համբերիր, համբերիր, այդ այնքան անսպասելի է ինձ համար, որ չը գիտեմ ինչ ասեմ: Ախար ինչո՞վ է Անտօնը վատ մարդ:

ՀԵՐՍԵԼԻ. Ախ, մամա, կարծես, անպատճառ ա-

մուսինը վատ մարդ պիտի լինի, որ չը սիրես նրան: Բաւական չէ, որ ամեն ժամ, ամեն ըրպէ գգոււմ եմ, որ ես խաբուած եմ, որ նա իմ կեանքի ընկեր չէ: Բաւական չէ, որ նրա հետ կենակցելը ինձ համար տանջանքների շղթայ է: Եւ միթէ ինձանից պիտի պահանջեն, որ այս շղթան կրեմ մինչև կեանքիս վերջը միայն այն պատճառով, որ նրա ծայրը ուրիշի ձեռքումն է: Անտօնը վատ մարդ չէ, այո, բայց իմ սրտի համար խորթ է, մամա... և աւելի, քան խորթ...

ՆԱՏԱԼԻԱ: Լսիր, աղջիկս, այժմ ես հասկանում եմ միտքդ և գիտեմ ինչու ես քեզ անբաղդ համարում: Ականջ դիր: Ես քսան տարեկան էի, քեզ նման գեղեցիկ, կրակոտ, երբ ամուսնացայ հօրդ հետ: Այն ժամանակուայ երիտասարդների մէջ նա աչքի էր ընկնում իւր դէմքով, խելքով ու սրախօսութիւններով: Ես սիրեցի նրան և այնքան բաղդաւոր էի, որքան, ինչ ասեմ, մի նոր օժուած թագուհի: Բայց (յուզմունքը զըսպելով) շուտով կեանքիս հարսանիքը սգի փոխուեց: Երկու տարի չէր անցել, երբ սկսուեցին ինձ համար այնպիսի սև օրեր, որոնց միայն կարող է քաշել խաբուած, դաւաճանուած և ուրիշների ճաղրի ու ծանակի առարկայ դարձած կինը:

ՀԵՐՍԵԼԻ: (Ջարմացած եւ վշտացած): Մամա, միթէ հայրս...

ՆԱՏԱԼԻԱ: Այո, սիրելիս, հայրդ, այդ, իսկապէս շատ բարի, բայց թուլամորթ մարդը: Հերսէլի, միթէ ես չը գիտեմ ինչու չես հաւանում Անտօնին: Այո, նա գեղեցիկ չէ, լեզուանի չէ, նա... մի քիչ մեծ է քո համեմատ: Մի խօսքով, ոչ մարմնով, ոչ հոգով քո ընկերը չէ: Բայց սիրելիս, այդ բոլորը դատարկ բաներ են համեմատած այն մեծ արժանաւորութեան հետ, որ ունի Անտօնը: Հերսէլի, նա պատիւդ ոտնատակ չի անում, նա քեզ չի դաւաճանում: Իսկ թէ այս ինչ արժէ—եւ

գիտեմ: Քանի քանի անգամ տխուր գիշերները, մեն-մենակ չորս պատերի մէջ նստած, արտասուք եմ թափել, օրս անիծել: Ես հոգով ցանկացել եմ, որ նա լինի տգեղ, ծեր, մինչև անգամ լիմար, միայն թէ ինձ և միայն ինձ ճանաչի կանանց մէջ:

ՀԵՐՍԵԼԻ: Խեղճ մամա, խեղճ մամա:

ՆԱՏԱԼԻԱ: Ահա մի այսպիսի գիշեր ես երգուեցի տալ քեզ մի կոպիտ շինականի, մի լետին արհեստաւորի, միայն թէ իմանամ, որ նա քեզ չի դաւաճանիլ: Ասում են, ես հրապուրուել եմ Բէգմուրեանի հարստութենով: Թող ասեն, ո՞ր մայրը չի ուզեցել, որ իւր աղջիկը հարուստ ապրի: Բայց, երգւում եմ եղբորդ արեւով, քո արեւով, Հերսէլի, գլխաւորը հարստութիւնը չի եղել: Երբ առաջին անգամ Բէգմուրեանին տեսայ, երբ հետը խօսեցի, սիրտս ինձ ասաց. «այդ մարդը լաւ ընտանեոէր կը լինի, իւր կնոջն երբէք չի դաւաճանիլ: Նա ինձ գիւր եկաւ: Վեց տարի է միասին ապրում էք, ասա, երբ և է Անտօնը մտածել է ուրիշ կնոջ մասին:

ՀԵՐՍԵԼԻ: Օո, եթէ այդքանը միայն բաւական լինէր նրան սիրելու համար: Մամա, մամա, ինչքն է հարկաւոր նրա հաւատարմութիւնը, երբ ես անտարբեր եմ գէպի նա:

ՆԱՏԱԼԻԱ: Ինչիդ է հարկաւոր: Օո, եթէ հաւատարիմ չէր լինիլ, կիմանայիր ինչիդ է հարկաւոր: Մարդս գնահատում է ունեցածն այն ժամանակ, երբ զրկւում է նրանից:

ՀԵՐՍԵԼԻ: Գուցէ, չըգիտեմ: Բայց, հաւատա մամա, երբեմն հոգոյս խորքում ցանկացել եմ, որ նա իմ մէջ շարժի նախանձի զգացում, գուցէ այդպիսով կարողանար տաքացնել սիրտս: Բայց վեց տարի է նա ինձ վրայ սիրահարուած է խելագարի պէս: Եւ այդ սէրն

ինձ համար սէր չէ, այլ, ինչպէս ասեմ, մի տեսակ պատիժ, մի անտանելի բեռ հոգոյս վրայ:

ՆԱՏԱԼԻԱ. Դու խելքդ կորցնում ես, դու ինքդ չք գիտես ինչ ես ասում: Դինը մարդու սիրուց տանջուի, այն էլ այնպիսի մարդու, որ քեզ շրջապատել է կեանքի բոլոր շքեղութիւններով: Երևի, աչքդ կշտացել է և հիմալ ուզում ես քեզ համար մի ուսման ստեղծել...

ՀԵՐՍԷԼԻ. (Գրգռուելով): Ահ, ինչպէս տեսնում եմ, վերջապէս, ստիպուած եմ ասել քեզ այն, ինչ-որ չէի ուզում ասել: (Ձայնը ցածացնելով): Մամա, ես զգուշ եմ նրանից, հասկանում ես, զգուշ եմ:

ՆԱՏԱԼԻԱ. (Ցնցուելով): Զգուշ ես:

ՀԵՐՍԷԼԻ. Այո, զգուշ եմ դէպի նա մարմնաւոր զգուշանք:

ՆԱՏԱԼԻԱ. Հերսէլի:

ՀԵՐՍԷԼԻ. Երբ նա մօտենում է ինձ ամեն անգամ և շինականի պինդ ձեռներով գրկում, երբ համբուրում է ինձ, մարմնովս անցնում է սարսուռ: Սկզբում դեռ ոչինչ, մի կերպ զսպում էի ինձ: Իսկ յետոյ, յետոյ, օհ, Աստուած իմ... (Երեսը ծածկում է ծնոններով):

ՆԱՏԱԼԻԱ. Բայց դու վեց տարի ապրել ես նրա հետ, դու երեխաներ ունիս...

ՀԵՐՍԷԼԻ. Ապրել եմ, այո, ապրել եմ ուրիշների աչքում, իսկ ինձ համար դա ապրուստ չի եղել, այլ գաղտնի տանջանք... (Հանդարտ լալիս է):

ՆԱՏԱԼԻԱ. (Մտաւտանջութեամբ): Աա, այդ ուրիշ բան է, մարմնաւոր զգուշանք: Դրա դէմ դեղ չք կայ... Բայց բաւական է, Հերսէլի, արտասուքով ոչինչ չես կարող անել: Գնանք երեխաների մօտ: Նրանք քեզ կը միութարեն, գնանք: (Ձանգակի ձայն): Ահա գալիս են... Գնանք, երեսդ լուացիր, հագնուիր... (Գրկած տանում նրան ըուղուար):

Նախասննակի դռներից ներս են մտնում Ան-
տոնն եւ Մարմարեան:

ՏԵՍԻՆ IV

ԱՆՏՈՆ ԵՒ ՄԱՐՄԱՐԵԱՆ

ԱՆՏՈՆ: Շարունակիր, ինչո՞ւ կանգ առիր:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Կը շարունակեմ, ես խօսմ չէի կա-
րող սպասաւորի ներկայութեամբ խօսել:

ԱՆՏՈՆ: Ահ, ինչ համար մի և նոյնն է: Այժմ,
կարծեմ, բոլորը գիտեն, որ այս տան մէջ ընտանեկան
խաղաղութիւնը խափանուել է: Շարունակիր, այստեղ
ոչ ոք չը կայ: (Նստում է գահաւորակի վրայ): Այն
Քնչ ճշմարտութիւն է, որի մասին իբր թէ ես չեմ հա-
մարձակուում մտածել:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Նայելով շուրջը): Դա այն է, որ
ով ուզում է կնոջից բաղդ ստանալ, պէտք է նախ և
առաջ ինքը բաղդ տալու ընդունակութիւն ունենայ:

ԱՆՏՈՆ: Ուրեմն քո կարծիքով ես չունէ՞մ այդ ըն-
դունակութիւնը:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Նստում է): Գուցէ ունէիր, բայց
ոչ Հերսէլիի պէս մի կնոջ համար:

ԱՆՏՈՆ: Ինչո՞ւ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ինչո՞ւ, ինչո՞ւ: Կրկնում եմ, հերիք
է ինչքան կոյր եղար, բաց արա աչքերդ և տես ինչ
ահագին անդունդ կայ քո և նրա մէջ:

ԱՆՏՈՆ: Դու խօսում ես իմ տարիքի մասին: Այո,
քսան տարով մեծ եմ նրանից, բայց այս կնոջ ու մար-
դու մէջ դեռ անդունդ չէ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Եէ, այդ չէ միայն, այլ ուրիշ, ա-
ւելի կարևոր բան: Մենք սովորել ենք թութակի պէս
կրկնել, թէ կինը լեւտ է մնացել տղամարդից: Իվալլա,
քո օրինակը հակառակն է ցոյց տալիս: Որպէս զի մար-

դիկ հաւատան, թէ դու բարձր ուսում ունիս, պէտք համալսարանական նշանը միշտ կրճքիդ ունենաս: Իսկ Հերսէլիի մտաւոր զարգացման նշանը ճակատին է գրոշմուած: Ահա քանի տարի է քո ձեռքին չեմ տեսել մի լուրջ գիրք: Քս ընթերցանութեան սիրած նիւթը կառավարչիդ հաշիւներն են կամ զանազան պայմանագրեր: Իսկ նա... նա շարունակ կարդում է, շարունակ մտածում և իւր միտքը նրբացնում: Յաճախ ես վկայեմ եղել ձեր վէճերին և միշտ յաղթութիւնը նա է տարել: Իսկ դու միայն մի գէնք ես ունեցել—ծաղր: Նա միշտ թուել է դէպի վեր, դու միշտ աշխատել ես նրա թւերը կրտրել և երկրին կպած պահել: Ախ, Անտօն, Անտօն, գիտես, եթէ ես լինէի քո տեղն ինչ կանէի: Եվալլա, կը տալի նրան կատարեալ ազատութիւն: Թող գնար, կըրթէր ու զարգացնէր իւր երաժշտական ձիրքը: Երկուսից մէկը, կամ նա կը դառնար երաժշտուհի, այն ժամանակ, ինչո՞ւ չէ, ես կը խոնարհուէի նրա առջև, կամ ոչինչ չէր դառնալ, կը հիասթափուէր, և այն ժամանակ նա ինքը կը խոնարհուէր իմ վեհանձնութեան առջև և յաւիտեան պարտական կը գգար իրան:

ԱՆՏՕՆ: Շարունակիր, շարունակիր...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Բայց դու միշտ կրկնել ես և կըրկնում ես մի տափակ միտք. «կինը ծնուած է ամուսին և մայր լինելու համար»: Եհ, դիցուք թէ այդպէս է: Բայց ասա խնդրեմ, ի՞նչ է եղել այս վեց տարին քո դրուլութիւնը: Մի օր, գոնէ մի ժամ համոզուած եղի՞լ ես, որ Հերսէլին քեզ է պատկանում հոգով ու սրտով, իւր ամբողջ էութեամբ, ասա—Ոչ: Դու ամեն վարկեան դողալով մտածել ես, թէ ահա ահա պիտի գայ աւելի արժանաւորն և խլի նրան քո ձեռքից: Եվալլա, և դու երեակայում էիր, որ դա ընտանեկան կեանք է, երջանկութիւն: Ողորմելի մարդ: Իսկ այժմ, այժմ ինչ ես անում, ասա խնդրեմ: Այդ քնչ վարմունք է: Փակել ես

մի նրբագգաց և խելօք կնոջ չորս պատերի մէջ և ինչպէս բարբարոս, տանջում ես նրան... Ինչո՞ւ, ինչ նպատակով:

ԱՆՏՕՆ: Ես նրա հետ խիստ եմ վարւում մեր փոխադարձ օգտի համար: Ահ, ես գիտեմ, որ այդ խելքի ժամանակաւոր շփոթութիւն է, շուտով կանցնի, և նա խելքի կը գայ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Եւ դու հաւատով ես այդ բանին, հաւատով ես, որ կը գրաւես երբ և է նրա սիրտը:

ԱՆՏՕՆ: Սիրտը գուցէ ոչ, բայց միտքը կը գրաւեմ և կենթարկեմ իմ իշխանութեան, որովհետեւ իբրեւ խելօք կին, նա կը հասկանայ, որ երեխաների մայր է:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Երեխաներ, երեխաներ: Ահա թէ թէ ինչի վրայ ես յուզ դրել: Ախ, եսամոլներ: Դուք կուրացնում էք միամիտ աղջկանց, ամուսնանում նրանց հետ: Յետոյ շտապում էք նրանց վզին փաթաթել երեխաներ: Այնուհետեւ, երբ դեռահասը հասունանում է, աչքերը բաց է անում և ուզում է ապրել իւր խելքի ու սրտի թելադրութեամբ, սկսում էք եզուխտաբար աղաղակել. «այդ աններելի է, ամօթալի, դու երեխաներ ունիս, պատուի զգացում, պարտականութիւններ», չը գիտեմ էլ ինչ: Եվալլա, իսկ սեպհական կեանքը, հարցնում եմ քեզ, սեպհական կեանքը: Նա ոչինչ չարժէ, ոչինչ: Նա պէտք է միշտ աղաւաղուի, ոտնատակ լինի եսամոլների համար...

ԱՆՏՕՆ: Ահ, բաւական է, թող ինչ: (Վեր է կենում): Դու չը գիտես ինչ է կատարւում այստեղ (Խոր փողում է սրտի կողմին): Իլիա, չը գիտես: Այո, ճիշտ է, որ Հերսէլուն ընտրելիս ես ղեկավարուել եմ էգօթիս տիկ զգացումով, ընտրել եմ նրա գեղեցկութիւնն ու երիտասարդութիւնը: Ես վաղօրօք մտքումս պարծեցել եմ ուրիշների առջև, որ պիտի ունենամ փայլուն կին: Բայց այժմ, այժմ, Իլիա, երգւում եմ պատուովս, կը ցանկանայի, որ նա լինէր տգեղ կամ ծեր: Այո այո,

կը ցանկանալի, որ մի աներևութ ձեռք լանկարծ ալդ սիրուն դէմքի վրայ դնէր մի բիծ, մի արատ, որպէս զի, որպէս զի...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Որպէս զի ոչ ոքի այլ ևս զիւր չը գար նա: Հասկանում եմ:

ԱՆՏՕՆ: Ոչ, ոչ, դու գեռ բոլորը չը գիտես: Լը-սիւր, Իլիա (ընկերով Մարմարեանի ձեռը ձայնը ցածացնում է), ես քեզ կը յայտնեմ մի գաղտնիք: Սո՛ւս, թող ոչ ոք այս չիմանայ: (Դորճողաւոր): Այս դժոխալին միտքն իմ գլխում ծագում է, գիտես երբ:— Խուլ գիշերները, երբ նրա ննջարանում տիրում է մեռելային լուռութիւն: Սպտիւր, ալդ երբ էր: Հա, երէկ չէ մէկէլ գիշերը: Ես մեն-մենակ անցուդարձ էի անում այստեղ, քնից զրկուած: Նա այնտեղէր (ցոյց է տալիս ըուղղաւոր): Ես մօտեցայ դռներին, բաց արի կիսով չափ և մտիկ արի գողնովի, որովհետև, գիտես Իլիա, այժմ իմ կնոջը միայն գողնովի կարող եմ նայել: Նա պառկած էր դիվանի վրայ սպիտակ հագուստով: Նրա շքեղ մագերէ սիրուն գլխիկի շուրջը—այո, այո, նա շատ ոիրուն գլխիկ ունի— կազմել էին սքանչելի պսակ: Բայց նա ինձ համար օտար էր, Իլիա, բոլորովին օտար: Ինձ թւում էր, որ ես նոր եմ տեսնում նրան, իմ օրինական կնոջը: Ես հիացած էի նրա գեղեցկութենով այնպէս, ինչպէս երբէք հիացած չեմ եղել: Լսիւր, լսիւր, լանկարձ ինձ պաշարեց մի չար ոգի: (Ձայնն աւելի ցածացնում է) Նրա գեղեցկութիւնն ու երիտասարդութիւնը զարթեցրին իմ մէջ սարսափելի նախանձ (շարժելով նրա ձեռը), լսո՛ւմ ես, լսո՛ւմ ես: Այո այո, նրա գեղեցկութիւնն ինձ թուաց մի չար ոստի: Այնտեղ, իմ կաբինեթում, սեղանիս մէջ կայ մի հեղուկ: Բաւական է մի կտոր բամբակ թաթիսել նրա մէջ, մի անգամ քսել նրա սիրուն ունքերին, և... չար ոստին այլ ևս գոլութիւն չի ունենայ, Իլիա, հասկացա՞ր միտքս... (Բաց

Թողնելով Մարմարեանի ձեռը, վառ աչքերով նայում է նրան, ինքն իւր ասածից սարսափած):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Ապշած նայում է նրան ու սարսափում): Անտօն, քո մէջ նստած է մի սարսափելի գազան: Լսել անգամ չեմ ուզում այդպիսի բաներ...

ԱՆՏՈՆ: (Շնչահատ): Այո, նա կամ ինչ պիտի պատկանի կամ ոչ ոքի, լսում ես, ոչ ոքի...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Նա ոչ ոքի չի պատկանում և հազիւ թէ երբ և է...

ԱՆՏՈՆ: Դու կարծում ես, դու համոզուած ես...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Կարող եմ պատուովս և կեանքովս երաշխաւորել: Հերքելին այժմ պատկանում է միայն ինքն իրան, իւր հոգու խորութեանը...

ԱՆՏՈՆ: Բայց այդ խորութեան մէջ նա կարող է գտնել իւր բարոյականութեան գերեզմանը... Կինն հոգեկան այդ դրութեան մէջ վտանգաւոր է իւր ամուսնու պատուի համար... Իլիա, պէտք է նրան փրկել անկման վտանգից...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Բայց մտածել այդպիսի մի վայրենի գործողութեան մասին, խլել նրանից աստուածային տո՛ւրքը, այլանդակեցնել... Դէհ, բաւական է, ես տեսնում եմ, որ դու սկսում ես ցնորուել...

ԱՆՏՈՆ: Ցնորուել... Այո, կարող է պատահել: (Արտասուախառն ծայնով) Բայց նայիր այս գազանի հոգու հակառակ կողմին, Իլիա, և տես այնտեղ ինչ կայ: Մի քանի րոպէ անցած, ես գազանս դարձայ բոլորովին ուրիշ մարդ: Ես դարձայ մի խեղճ, ողորմելի էակ, Իլիա: Եւ այն ժամանակ իմ մէջ յղացաւ ցանկութիւն—մօտենալ նրան, չոքել նրա առջև, ջերմ արտասուքով ներումն խնդրել: Ծո, նրանի՛ց. դա մինչև անգամ ծիծաղելի է, չէ՞. ներումն խնդրել նրանից, որի առջև մեղաւոր եմ միայն իմ անհուն սիրով: Իլիա, Իլիա, լինել այսքան նրա մօտիկ և այսքան հեռու նը-

բանից: Սիրել սեպհական կնոջդ, որի հետ ապրել ես վեց տարի, սիրել խելագարի պէս և չը տիրել նրան— դա աւելի քան անբաղդութիւն է, դա թշուառութիւնն է: (Լորուծիւն) Բայց ես տղամարդ եմ, չը պիտի թող տամ ինձ ընկճուել:

ՄԱՐՄԱՐԵԱՆ, Այսպէս թէ այնպէս, հարկաւոր է վերջ տալ այդ դրութեանը, ապա թէ ոչ, ինչպէս տեսնում եմ, դու հոգեպէս հիւանդանում ես... Բայց առ այժմ՝ գնանք դուրս, անցնենք մի փոքր դէս ու դէն, որ մտքերդ ցրուեն: Մաքուր օդը կադդի քեզ վրայ բարեբար կերպով:

ԱՆՏՕՆ: Զիշտ ես ասում, գնանք: (Դիմում է նախասննակ):

Մարմարեանը հետետում է նրան:

Բուդուարից դուրս է գալիս Նատալիան:

ՏԵՍԻԼ V.

ՆՈՅՆՔ ԵՒ ՆԱՏԱԼԻԱ

ՆԱՏԱԼԻԱ: Անտօն:

ԱՆՏՕՆ: (Կանգ է առնում) Ի՞նչ էք կամենում:

ՆԱՏԱԼԻԱ: Սպասիր, ես հիմալ գիտեմ ինչ է պատահել, բայց բոլորը դատարկ բաներ են: Հաշտուեցէք: ԱՆՏՕՆ: Ես նրա հետ չեմ կռուել:

ՆԱՏԱԼԻԱ: Գիտեմ, դու մեղաւոր չես: Նա է մի քիչ ջահելութիւն անում: Երեխայ է, ոչինչ: Ծիծաղիր նրա երեսին, ամեն բան կը վերջանայ:

ԱՆՏՕՆ: Լսում ես, իլիա, ինձ առաջարկում են ծիծաղել, ինձ, որ ամբողջ վեց տարի աշխատել եմ նրա կեանքը ծիծաղ և ուրախութիւն դարձնել:

ՆԱՏԱԼԻԱ: (Դէպի ընդուարը) Հերսէլի, եկ այստեղ: Գուրս եկ, լաւ, խնդրում եմ: (Անտօնին) Դէ, որդի, գնա, ինքդ խնդրի: (Անտօնը ինքնասիրութիւն

թիւնից դրդուած չի գնում): Ձեռ ուզում: (Մարմարեանին): Դուք խնդրեցէք, Իլիա Մարտինիչ, նա ձեզ շատ է յարգում:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Մօտենում է ըուղուարին): Տիկին Հերսէլի, մի ըոպէ...

ՀԵՐՍԵԼԻ: Դուրս է գալիս եւ Մարմարեանին ըարեւում:

ՏԵՍԻԼ VI

ՆՈՅՆՔ ԵՒ ՀԵՐՍԵԼԻ

ՀԵՐՍԵԼԻ: Ինչ էք կամենում, Իլիա Մարտինիչ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Թէեւ, ես իբրեւ երրորդ անձ, աւեր լորդ եմ, բայց ձեր մէջ տեղի ունեցող ընդհարումներն ինձ յայտնի են: Իբրեւ այս տան անկեղծ բարեկամ, կը փափագէի այստեղ խռովութիւններ չը տեսնել: Բարեկամս և ընկերս տանջւում է...

ԱՆՏՕՆ: Իլիա...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ինչո՞ւ չասել ճշմարիտը, մէթէ ինքը չը գիտէ: Տիկին, կան դրովութիւններ, որ մեզանից են կախուած դարձնել նրանց կօմեդիա թէ դրամա:

ՀԵՐՍԵԼԻ: Ես այժմ կարող եմ հեռանալ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Ջարմացած): Ո՛ւր:

ՀԵՐՍԵԼԻ: Այս տան բազմութիւ սենեակներից մէկը: Փակուել այնտեղ, ոչ ոքի երեսը չը տեսնել, ոչ ոքի հետ չը խօսել, ոչ ոքի:

ԱՆՏՕՆ: Ա՛յդ է ձեր փափագը:

ՀԵՐՍԵԼԻ: Այո՛:

ԱՆՏՕՆ: Իլիա, անցիր մի ըոպէ իմ կաբինէթը: Մայրիկ, հեռացէք, խնդրեմ:

Մարմարեանն անցնում է առանձնասենեակ, նատալիան ըուղուար:

ՏԵՍԻՆ VII

ՀԵՐՍԵԼԻ ԵՒ ԱՆՏՈՆ.

ԱՆՏՈՆ: Ի՞նչ ես ցանկանում, վերջապէս, ի՞նչ է քո պահանջը. ասա պարզ, կտրական, որ ես էլիմանամ:

ՀԵՐՍԵԼԻ: Բաժանուել:

ԱՆՏՈՆ: Բաժանուել: Ախար պատճառը, չէ՞ որ մի յայտնի պատճառ պէտք է լինի. Դաւաճանել եմ քեզ, արդեօք, խաբել, քաղցած պահել. Հարբեցող եմ, արդեօք, գող, աւազակ, անբարոյական, թէ՛ չեմ կարողանում կերակրել ու պահել:

ՀԵՐՍԵԼԻ: Այդ բոլորը ոչինչ այստեղ (խփելով սրտին) եղածի համեմատ:

ԱՆՏՈՆ: Ախար ի՞նչ կալ տղտեղ, ասա որ իմանամ...

ՀԵՐՍԵԼԻ: Ահ, եթէ մինչև հիմա չես զգացել ու իմացել, այսուհետև բացադրելն աւելորդ է:

ԱՆՏՈՆ: Լաւ, չես սիրում, իմացալ: Մի սիրելի, չեմ կարող ստիպել սիրելու: Բայց շարունակիր մնալ կինս, հասկանում ես, կինս, երեխաներիս մայրը: Ի՞նչ արած, խօս բոլոր կանայք իրանց մարդուն չեն սիրում:

ՀԵՐՍԵԼԻ: Առաջ ես անտարբեր էի դէպի քեզ, լետոյ սկսեցի ատել, այնուհետև զգուել...

ԱՆՏՈՆ: (Յնցուելով) Զգուել...

ՀԵՐՍԵԼԻ: Իսկ այժմ վախենում եմ քեզանից...

ԱՆՏՈՆ: Վախենում ես...

ՀԵՐՍԵԼԻ: Այո, միթէ մոռացել ես: Աստուած իմ, այն ի՞նչ էր... Ես պառկած էի այնտեղ (ցոյց է տալիս ընդդուարը) փակ աչքերով: Դու ներս մտար. Կարծում էիր քնած եմ: Նախցի քո դէմքին: Աչքերդ վառուել էին ածուխի կտորների պէս, շրթունքներդ կպել էին առամենբրիդ ու դողդողում էին: Քո ամբողջ կերպա-

ըանքն արտայայտում էր գազանութիւն: Ինչ էիւր մտա-
 ճում անել—չը գիտեմ, բայց քո դէմքի վրայ կտրդացի
 սոսկալի դիտաւորութիւն: Ես գողալովոտքի կանգնեցի,
 դու նայեցիր ինձ բռունցքներդ սեղմած, ատամներդ
 կրճտելով և հեռացար ուրուականի պէս: Ոչ, ոչ, ես սար-
 սափում եմ մտաբերելիս: Ձեմ կարող, չեմ կարող, եթէ
 մի շաբաթ էլ շարունակուի այս դրութիւնը, կը խելա-
 գարուեմ: Իսկ ես չեմ ուզում այս, որովհետեւ կեանքը հա-
 մարում եմ աստուածային անփոխարինելի պարգև:

ԱՆՏՕՆ: Դու վայելում էիր կեանքի բոլոր հրա-
 պոյրները, միայն չը գնահատեցիր ինձ: Հերսէյն, մի
 ստիպիր ինձ աւելի չար մարդ դառնալու, խելքի եկ:

ՀԵՐՍԵՅԼԻ: Ես ոչնչից չեմ վախենում բացի կեղծի-
 քից ու ստից:

ԱՆՏՕՆ: Դարձեալ նույնը:

ՀԵՐՍԵՅԼԻ: Այո. և միշտ:

ԱՆՏՕՆ: (Գրգռուելով): Ինչպէս տեսնում եմ, ան-
 քարոյականութեան սերմը քո մէջ եղել է ի բնէ, իսկ
 այդ լիրբ կինը միայն զարգացրել է նրան: (Հերսէյնին
 ուղղում է հեռանալ ըուղուար): Սպասիր, այդ չէ քո ճա-
 նապարհը (ցոյց է տալիս նախասենեակի դռները),
 ահա...

ՀԵՐՍԵՅԼԻ: Այդ ես քեզանից առաջ եմ վճռել: (Բայ-
 չերն ուղղում է դէպի ըուղուար):

ԱՆՏՕՆ: Ոչ: Ես քեզ չեմ թող տալ տեսնուել նրանց
 հետ:

ՀԵՐՍԵՅԼԻ: (Շայելով նրան ատելութեամբ): Զուր
 քն քո բոլոր սպառնալիքները... (Ուղղում է գնալ ըու-
 ղուար)...

ԱՆՏՕՆ: (Միանգամայն ինքն իրանց կորցնելով):
 Ուրեմն ոչ այս է քո ճանապարհը, ոչ այն: Ահա նա
 (ցոյց է տալիս լուսամուտը), ես կը շարեմ քեզ փո-
 ղոց ինչպէս մի կեղտոտ շոր: (Յարձակում է վրեն):

ՀԵՐՍԷԼԻ, (Աղաղակում է): Ա՛հ...

ՆԱՏԱԼԻԱ, (Ներս է մտնում ըուդուարից): Անտոն...

ՄԱՐՄԱՐԵԱՆ, (Ներս է մտնում նախասենեակից):

Անտոն...

ԱՆՏՕՆ, Ինքն իւր դիտաւորութիւնից սարսափած,
կանգ է առնում, աշխատելով ուշքը ժողովել:

Հերսէլին ընկել է մօր գիրկը:

ԱՆՏՕՆ, Տաք, հեռացրու ինձ այստեղից, Իլիա: Ես
յանցանք կը դործեմ:

Մարմարեանը ընում է նրա թեւքից եւ տանում
նախասենեակ:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԵՐԲԱՆՁԱԴԷ

(Վերջը հետեւեալ համարում)